Հավելված 4
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2022 թվականի նոյեմբերի 3 -ի N 331- Լ որոշմամբ
Գործում է սկսած 2022 թվականի նոյեմբերի 14-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33, 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

	Ընդհանուր պայմաններ			
1.	**Վարկի տեսակ**	վարկ		վարկային գիծ
2.	**Նպատակ**	այլ		
3.	**Նվազագույն գումար/սահմանաչափ**[1]	100 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ		
4.	**Առավելագույն գումար/սահմանաչափ**	250 000 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ		
5.	**Արժույթ**	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, Ռուբլի		
6.	**Տարեկան անվանական տոկոսադրույք**	Միևնույն արժույթով վարկ	Ավանդի դիմաց վճարվող տոկոսադրույք և/կամ պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերություն + 2%	
		Տարբերվող արժույթով վարկ	ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք + 5% [2]	
7.	**Տարեկան փաստացի տոկոսադրույք**[3]	Միևնույն արժույթով վարկ	2.28%-11.60%	2.63%-18.57%

[1] Տարբերվող արժույթով վարկային գծերի դեպքում նվազագույն սահմանաչափը կազմում է 300 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
[2] Նշված տոկոսադրույքը կիրառվում է այն դեպքերում, երբ ավանդի և/կամ պարտատոմսերի արժույթը տարբերվում է վարկի արժույթից:
[3] ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:
Սույն պայմաններում տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկված է հաշվի առնելով Idram Rocket Visa վճարային քարտի սակագները, ինչպես նաև տեղեկատվական ամփոփագրի հաստատման օրվա դրությամբ Բանկում գործող ավանդի դիմաց վճարվող տոկոսադրույքները և/կամ պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը: Այլ վճարային քարտով վարկ/վարկային գիծ ստանալու դեպքում նշված փաստացի տոկոսադրույքները կարող են փոփոխվել:

		Տարբերվող արժույթով վարկ	16.08%	16.57%-23.38%
8.	**Վարկային գծի չօգտագործված մասի դիմաց հաշվեգրվող տարեկան տոկոսադրույք**	չի սահմանվում		
9.	**Վարկի/վարկային գծի տրամադրման միջնորդավճարներ**	չի սահմանվում		
10.	**Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն**	Միևնույն արժույթով վարկ	Գրավադրվող դրամական միջոցների անվանական արժեքի 95%-ի չափով	
		Տարբերվող արժույթով վարկ	Գրավադրվող դրամական միջոցների անվանական արժեքի 90%-ի չափով	
11.	**Մարման եղանակ**	1) **անուիտետային՝** ամսական հավասարաչափ մարում, կամ 2) **դիսկոնտային՝** տոկոսագումարների վճարումը ժամկետի սկզբում, իսկ մայր գումարինը՝ ժամկետի վերջում 3) **զսպանակաձև՝** մայր գումարի վճարումն ամսական հավասարաչափ մասերով, իսկ տոկոսագումարներինը՝ ամսական	1) տոկոսագումարների մարումը՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը միևնույն ամսվա 1-ի դրությամբ կուտակված տոկոսների հանրագումարի չափով, 2) մայր գումարի մարումը՝ ժամկետի վերջում	
12.	**Վարկային գծի ամսական մարման նվազագույն չափ**	-	չի սահմանվում	
13.	**Վարկային գծի մարման արտոնյալ ժամանակահատված**	-	<u>Մինչև 45 օր</u> նախորդ ամսվա ընթացքում վարկային գծի անկանխիկ օգտագործված գումարների նկատմամբ (բացառությամբ քարտից քարտ փոխանցումների, ներբանկային և միջբանկային փոխանցումները ՀՀ տարածքում և սեփական հաշիվների միջև) տոկոսներ չեն հաշվարկվում, եթե հաճախորդը վարկային գծի օգտագործված մասի մարումը կատարի մինչև ընթացիկ ամսվա 15-ը	
14.	**Նվազագույն ժամկետ**	2 ամիս		

15.	**Առավելագույն ժամկետ**	մինչև ավանդի և/կամ պարտատոմսի մարման օրը	
16.	**Տրամադրման եղանակ**	ՀՀ դրամով վարկերը տրամադրվում են անկանխիկ՝ ընթացիկ հաշվի միջոցով	անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով
		արտարժույթով վարկերը տրամադրվում են անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով	
17.	**Վարկի/վարկային գծի գումարի կանխիկացման վճար**	Համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված կանխիկացման սակագների	
18.	**Ապահովվածություն**	հաճախորդի կամ այլ անձի (ֆիզիկական, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր) կողմից Բանկում ներդրված դրամական միջոցներ և/կամ դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք և/կամ ձեռքբերված «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմս	
19.	**Երկարաձգման պայմաններ**	Վարկի/վարկային գծի ժամկետը կարող է երկարաձգվել վարկի/վարկային գծի վերջնաժամկետից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, երկարաձգման օրվա դրությամբ Բանկում գործող պայմաններին համաձայն, եթե՝ 1) մինչև 20 միլիոն ՀՀ դրամ և համարժեք արտարժույթով վարկերի դեպքում վարկառուն վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ «ԱյԴի» բանկում չունի դասակարգված պարտավորություններ կամ 3 (երեք) աշխատանքային օրից ավել ժամկետանց պարտավորություններ 2) 20 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող վարկերի դեպքում վարկառուն վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ ՀՀ ֆինանսաբանկային համակարգում չունի դասակարգված պարտավորություններ կամ 3 (երեք) աշխատանքային օրից ավել ժամկետանց պարտավորություններ Երկարաձգումը կարող է իրականացվել առավելագույնը մինչև ավանդի և/կամ պարտատոմսի մարման օրը:	
Վարկառուի նկատմամբ պահանջներ			
20.	**Կարգավիճակ**	1) ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ, 2) Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ	
21.	**Վարկառուի տարիքային սահմանափակում**	Վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ վարկառուի տարիքը չպետք է 18 տարեկանից պակաս լինի:	
22.	**Վարկային պատմության նկատմամբ պահանջ**	1) մինչև 20 միլիոն ՀՀ դրամ և համարժեք արտարժույթով վարկերի դեպքում. վարկառուն վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ «ԱյԴի» Բանկում չպետք է ունենա դասակարգված պարտավորություններ կամ 3 (երեք) աշխատանքային օրից ավել ժամկետանց պարտավորություններ 2) 20 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող վարկերի դեպքում. վարկառուն վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ ՀՀ ֆինանսաբանկային համակարգում չպետք է ունենա դասակարգված պարտավորություններ կամ 3 (երեք) աշխատանքային օրից ավել ժամկետանց պարտավորություններ	
Վճարային քարտի պայմաններ և սակագներ			

23.	**Վճարային քարտի տեսակ**	Բանկի կողմից թողարկվող ցանկացած տեսակի վճարային քարտ բացառությամբ դեբետային վճարային քարտերի և ArCa վճարային քարտերի
24.	**Վճարային քարտի սակագներ**	Համաձայն յուրաքանչյուր քարտի համար Բանկում գործող սակագների՝ հետևյալ հղմամբ՝ **Քարտերի տեղեկատվական ամփոփագրեր**
	ՏՈՒՅԺԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	
25.	**Ժամկետանց վարկի գծով օրական տույժ, տուգանք**	0.1%
26.	**Ժամկետանց տոկոսագումարների գծով օրական տույժ, տուգանք**	0.1%
27.	**Վաղաժամկետ մարման տույժ**	չի սահմանվում
28.	**Վարկի վաղաժամկետ մարում պահանջելու հիմքեր**	Բանկն իրավասու է պահանջել վարկի վաղաժամկետ մարում, եթե՝ • Վարկի ստացման համար ներկայացված տեղեկատվությունները կեղծ կամ անարժանահավատ են • ՀՀ ֆինանսաբանկային համակարգում վարկային պարտավորությունների գծով հաճախորդը ունի «ստանդարտ» դասից տարբերվող դասակարգում • Հաճախորդը հրաժարվում է կամ փակում է վճարային քարտը • Այլ հիմքեր համաձայն պայմանագրի
	Այլ պայմաններ	
29.	**Վարկի/վարկային գծի տրամադրման միջնորդավճար**	չի սահմանվում
30.	**Վարկի/վարկային գծի տրամադրման դրական գործոնները**	1) վարկառուի տվյալների համապատասխանությունը սույն վարկավորման պայմաններին 2) դրական վարկային պատմությունը
31.	**Վարկի/վարկային գծի մերժման գործոնները**	1) բացասական վարկային պատմությունը, 2) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվությունը, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից Բանկին տրամադրված/հայտարարված տեղեկությունները, 3) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվությունը, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը, 4) էլեկտրոնային փոստի բացակայություն 5) հաճախորդը չպետք է ներառված լինի Բանկի անցանկալի հաճախորդների ցանկում [4]: 6) այլ հիմքեր
32.	**Վարկի/վարկային գծի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը**	անհրաժեշտ փաստաթղթերը բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օր

[4] Բանկի անցանկալի հաճախորդ դասակարգելու վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ» ընթացակարգով- https://idbank.am/information/helpfull-information/Classification_procedure.pdf

33.	**Որոշման մասին տեղեկացնելու ժամկետը**	որոշման կայացումից հետո 1 աշխատանքային օր Բանկը վարկի տրամադրման վերաբերյալ կայացրած որոշման մասին հաճախորդին կարող է տեղեկացնել Բանկի տարածքում, հեռախոսազանգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
34.	**Վարկի/վարկային գծի վարկառուին տրամադրելու ժամկետը**	վարկի դիմումի ներկայացումից հետո 1 աշխատանքային օր, բացառությամբ վճարային քարտի միջոցով տրամադրվող վարկերի/վարկային գծերի, որոնց դեպքում՝ 3 աշխատանքային օր
35.	**Որոշման վավերականության առավելագույն ժամկետը**	15 աշխատանքային օր
36.	**Վարկի/վարկային գծի դիմումի ընդունման և ձևակերպման վայր**	Բանկի բոլոր մասնաճյուղեր
Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող փաստաթղթերի ցանկ և տեղեկատվություն		
	1. Անձը հաստատող փաստաթուղթ 2. Սոցիալական քարտ/հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք (այն դեպքում, եթե հաճախորդը չի հանդիսանում Բանկի հաշվետեր), 3. Էլեկտրոնային փոստի հասցե 4. Բանկի պահանջով այլ փաստաթղթեր:	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:**

2. **Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:**

3. **Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:**

4. **Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:**

5. **Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:**

6. **Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:**

7. **Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:**

8. **Արտարժույթով վարկերի դեպքում փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է ընդունվում վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքը: Փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:**

9. **Վարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները վարկառուի ցանկությամբ կարող են վճարվել նաև վարկի արժույթով:**

10. **Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:**

11. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

12. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

13. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

14. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

15. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58-24-21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

16. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

17. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

18. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

19. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագներ:

20. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

21. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի և Idram բջջային հավելվածի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ